

ՀԱՅԵՐԸ ԴՐՍՈՒՄ

# ԱՆՍՈՌԱՅ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿՐԱՍՆՈՂԱՐՈՒՄ



Կուրսան գետը, երկու ճյուղի բաճանված, Կրասնոդարի ճիշտ մեջտեղում հողի մի լեզվակ է ստեղծել: Մարդիկ այդ լեզվակի վրա հանգստավետ ծառուղիներ են աճեցրել, գողտրիկ սրճարաններ կառուցել, և մենք երեք հայագետներս Կարինե Եսայանը, Կարինե Փիլոյանը և Արմենուհի Դեմիրճյանս, կամրջին կանգնած, հիանում ենք լայնահուն գետի շքեղ տեսարանով: Ճիշտն ասած, բաց երկնքի տակ չենք մտել ենք մեծ կամրջին թառած մի փոքրիկ սրճարան, որի տերը, տեսնելով, որ մենք էլ հայ ենք և վարարող անձրևից պիտի թրջվենք, ընկերաբար հրավիրել է ներս ու թեյ է հյուրասիրում:

— Ընտանիքը վեք, երեխաներ ունե՞ք, — ջերմ տոնով հարցնում է Կարինե Եսայանը: Նա Կրասնոդարի երկրամասի հայ համայնքի ամենապատասխանատու ղեմաբերից է, երեխաների հայեցի կրթությունն ապահովողը, և հարցը ոչ միայն տեղին, այլև անհրաժեշտ է: Մեր հայը սկսում է պատմել, որ Չարենցավանից է, 10 տարեկան, լավ նկարող աղջիկ ունի, և հենց այդտեղ էլ որոշվում է, որ երեխան պետք է հաճախի հայկական մշակույթի կենտրոն, սովորի նկարչական և այլ խմբակներում:

Իսկ Հայկական կենտրոնը... Օ, սա իսկական նորություն է, որ բռնել է արդի շենքի մի ամբողջ հարկաբաժին՝ 5-րդ հարկը: Իր նշանակությամբ այն Մոսկվայի Լազարյան ձեմարանից հետո ամենակարևորն ու ամենագեղեցիկն է, տեսարժան այս կամրջից էլ ընդամենը մի քանի քայլի վրա: Երեք հայագետներս, սակայն, ոչ մի կերպ չենք կարողանում հաղթահարել այդ մի քանի քայլը, քանի որ կծով թափվող անձրևը դարձել է հեղեղ, փողոցները վերածել իսկական գետերի:

— Վերջ, — ասում է Կարինե Եսայանը, — Կրասնոդարում հիմա նավակներով պիտի ման գան: Ստիպված կլինենք հանդիպումը մեկ կամ 1,5 ժամով հետաձգել:

Ես անկեղծորեն գարմանում եմ. այս անձրևի եղածն ի՞նչ է, որ մեզ խանգարի, Կապուտիկյանին նվիրված երեկոն էլ հետաձգենք: Մակայն պարզվում է անձրևն իրոք կխանգարի, քանի որ այս մեծ ու սիրուն կրասնի կոչվող քաղաքում, կոյուղագծերն այնքան են հնացել, որ անձրևաջուրը ներս չեն քաշում: Բա հիմա չասե՛ս ականջդ կանչի, Երևա՛ն, կամ ողջուն քեզ, Հայաստան, որ փողոցիկի ու հեղեղի ժամանակ էլ ջրահավաք ավազանիդ շնորհիվ մեզ պահում ես պինդ հողի վրա, բայց մենք այդ մասին միայն դրսում ենք իմանում...

Ի վերջո, վերադառնում ենք բաղձայի վայրը հայոց ազգային կենտրոն, որ մի փոքրիկ Հայաստան է Հայաստանից դուրս: Իմ տեսած բազմաթիվ կենտրոնների մեջ այս մեկը առանձնահատուկ անուշիկ է: Մարդիկ ծայտերես են, գույքը ամբողջովին նոր ու ճաշակավոր, ընդարձակ սրահը հայկական մթնոլորտի խտացում: Պատերին մեր խորհրդանիշներն են Արարատ, Մասունցի Դավիթ, նուր ու խաղող, դարակներում գրքեր և հայկական հուշանվերներ, որ գնալով պետք է շատանան: Ահա և հայտնվում են առաջին հյուրերը, բայց զանգոններն ավելի շատ են.



— Տիկին Եսայան, — տագնապած ահագանգում են տարբեր թաղամասերից, շքամուտքի դուռն անգամ բացել չենք կարողանում, հեղեղը լցվում է ներս: Ինչ կլինի, հանդիպումը մի քիչ հետաձգեք:

— Եղավ, մի անհանգստացեք, հիմա մեքենա կուղարկեմ, — ասում է տիկին Եսայանը և սկսում զանգել իր հարազատներին, որ տաքսիներ վարձեն ու գրքասեր հայ հանրությանը հասցնեն այստեղ: Մի խոսքով՝ հայկական միջավայր, հայկական վերաբերմունք, հայկական սիրտ ու հոգի...

\* \* \*

Այս ամենի մասին, ի դեպ, ես կարող էի լուր չունենալ, քանի որ հանգրվանս Անապայում էր: Մանկության ընկերուհիս հրաշալի բանասեր, ազգային գործերի ինքնամոռաց նվիրյալ Կարինե Փիլոյանը, ինձ հրավիրել էր իր տնօրինությամբ գործող «Մուշ» դպրոց, որտեղ նաև ամառային ճամբար էր բացել մոտիկ վայրերի հայ երեխաների համար: Անչափ հետաքրքիր էր տեսնել մեղվի ժրջանությամբ գործող հայանպաստ այս կառույցը և ծանոթանալ Կարինեի ջանքերով ստեղծված «Իմ մայր» կազմակերպության անդամների հետ, որոնք օգնում են 44-օրյա պատերազմի վերավորներին: Հաճելի էր շոշափել նկարազարդ երկլեզու դասագրքերը, որոնցից երեքի հեղինակը Կարինե Եսայանն էր, մյուս երկուսինը՝ Երազիկ Հարությունյանը, իսկ վերջին գրքի կազմողը ինքը՝ Կարինե Փիլոյանը: Ուրախալի էր տեսնել երեխաների առաջընթացը, և ահա մի թեժ օր, երբ մեծ ու փոքր գրոհել էին «Մուշ» դպրոց, զանգ ենք ստանում Կարինե Եսայանից, թե մոտիկ Կրասնոդարը ցանկանում է գրական-երաժշտական երեկո նվիրել Միլվա Կապուտիկյանին: Այստեղ ուրախությունս կրկնապատկվում է, որովհետև մտածում եմ մի համայնք էլ կտեսնեմ, կճանաչեմ հայության ամենամեծ կենտրոններից մեկը, կծանոթանամ Կապուտիկյանի նոր երկրպագուներին, իսկ ճանապարհը հեշտ կլինի, քանի որ միջազգային ճանաչում ունեցող անվանի ազգաբարձր Հովիվ Մաքսյանը Կարինե Փիլոյանի ամուսինն ու բոլոր գործերի աջակիցը, հանձն է առնում տեղ հասցնել մեզ:

Ընդարձակ մայրուղու վրա, լուսե արևածաղիկների դաշտերով անցնելիս, ընկերու-

հիս ասում է, որ մեր հերոս Հունան Ավետիսյանի գերեզմանը շատ մոտ է, և Հովիվը Նովոռոսիյսկի մոտակայքում դեկը թեքում է դեպի մի բլուր, որ տեսնենք հուշարձանը: Պարզվում է Հունանին մարմնավորող արձանի տակ հինգ գոհերի գերեզման է, բոլոր հերոսներն էլ հայ. ավագ սերժանտ Հունան Ավետիսյան, լեյտենանտ Պետրոս Բղանյան, սերժանտ Մարգի Մահակյան, շարքայիններ Վասիլ Մաքսյան և Ջավեն Գևորգյան: Նրանք անմահացել են 1943-ի սեպտեմբերի 16-ին գերմանական գնդացրի դեմ պայքարելիս, մինչև որ Հունանը կրծքով փակել է փողի բերանը: Այստեղ իմանում եմ նաև, որ չորրորդ ռազմիկը՝ Վասիլ Մաքսյանը, Հովիվի պապիկի եղբայրն է՝ ծագումով ստեփանավանցի: Ինչ ասես... դարձյալ հայի հետք, հայի անպարագիծ հերոսություն...

Հիմա հին ու նոր պատերազմների հաշիվը խառնվել է, մեր մտքերը՝ նույնպես, բայց երբ հասնում ենք Կրասնոդարի հայոց գեղեցիկ կենտրոն, շատ բան տեղն է ընկնում: Մինչ երեկոյի սկսվելը նվիրյալ

տասանում են հայրենասիրական ու քնարական բանաստեղծություններ, երգում հայտնի երգերից: Կուլմինացիան գնալով զարգանում է, երբ շատերը միանում են երգչուհի Բնեսա Կոնյանյանին, նրա հետ երգում «Մախմուր աղջիկ»-ը, իսկ երեկոյի գագաթը դառնում է «Երվում եմ, Երվում» բանաստեղծությունը՝ Կարինե Փիլոյանի անգուգական ասմունքով: Մրանով հասկանում ենք, որ Կապուտիկյանը բոլոր ժամանակների գրող է և հայոց ցավերին լուծում տվող բանաստեղծ...

Այստեղ ես հաճելիորեն հայտնաբերում եմ նոր անուններ, որոնցից մեկը բանաստեղծուհի Տալիթյան է՝ իր գեղեցիկ գործերով, հիանում եմ դահլիճի մասնակցողական խինդով, քանի որ ասմունքում են և քաղաքային համայնքի աշխատակիցները, և հյուրերը: Իմ խոսքում ես հատուկ շնորհակալություն եմ հայտնում տիկին Եսայանին, որ կարճ ժամանակամիջոցում այսքան գեղեցիկ ու ընդգրկուն աշխատանք է տարել, ներգրավել մեծ թվով մարդկանց: Երախտագիտություն եմ հայտնում Ռուսաստանի Հայերի Միության քաղաքային համայնքի գործերի կազմակերպիչ Տիգրան Խաչատուրովին՝ բանաստեղծուհու ստեղծագործության բնութագրող շքեղորեն ներկայացնելու համար: Վերջում, բնականաբար, ես պատմում եմ մեր թանգարանի մասին, բացատրում տեղը, այսինքն՝ Ազգային ժողով-ակադեմիա-նախագահի նըստավայր եռանկյունու վերջին անկյունի դիրքը, և մարդկանց աչքերի փայլից հասկանում, որ երբ էլ գան Երևան, հեշտությամբ գտնելու են Կապուտիկյանի տունը:

Ուշացումով սկսված երեկոն ուշ էլ ավարտվում է, և լավն այն է, որ ոչ մեկը չի շտապում հեռանալ. դրսի գործերը կարծես մի քիչ մոռացվել են: Մրա համար ես ուզում եմ հատուկ շնորհակալություն հայտնել բոլոր ներկայներին և ասել ի՞նչ լավ է, որ անձրևը եկավ ու լակմուսի թոթի պես նորից շեշտեց գեղեցիկից չհրաժարվելու մեր ինքնությունը, ինչ լավ է, որ Կապուտիկյանի անմահ անունը միավորեց այսքան հայերին:

Երախտագիտությունս եմ հայտնում նաև իմ նոր բարեկամներին՝ ՌՀՄ Կրասնոդարի քաղաքային համայնքի նախագահ Արկադի Եսայանին, ՌՀՄ քաղաքա-



Ցավոք, այդպիսի կաշկանդումների մեջ է նաև երիտասարդ սերունդը, որը մեզ Հայաստանում ապրողներին, պետք է ստիպի լուծումներ փնտրել...

Երեկոն իսկա սրահում սկսում ենք առանց մի ազատ աթոռի: Բոլոր տեղերը զբաղված են, և դա նշանակում է, որ հեղեղները անցողիկ են, իսկ մեր ցանկությունները մնայուն: Ներկաները նախ դիտում են բանաստեղծուհու մասին պատմող տեսաֆիլմը, և ես մտածում եմ, որ տիկին Եսայանը շատ ճիշտ մարտավարություն է ընտրել՝ մարդկանց Կապուտիկյանի ջերմությամբ վարակելու համար: Այնուհետև տիկին Եսայանը փուլ առ փուլ բացահայտում է բանաստեղծուհու վաստակը, նրա աշակերտները ներշնչված ար-

յին բաժանմունքի գործերի կազմակերպիչ Տիգրան Խաչատուրովին, երիտասարդության բաժնի ղեկավար Կամո Ջաքարյանին, ՌՀՄ երկրամասային բաժանմունքի քարտուղար Անի Գրիգորյանին և, իհարկե, ՌՀՄ երկրամասային կրթության բաժանմունքի պատասխանատու Կարինե Եսայանին ու Անապայում կյանքը հայեցի պահող-պահպանող Կարինե Փիլոյանին:

Հուսանք նոր ու բովանդակալից հանդիպումները չեն ուշանա:

**Արմենուհի ԴԵՄԻՐՃՅԱՆ**  
Միլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի ղեկավար, գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու